Արձանագրություն N 4

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Գ. Խաչիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Մարգարյան

1. Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել ս. թ. նոյեմբերի 5-ին ժամը 10:00-ին:

2. Էլեկտրոնային աճուրդը սկսելու վերաբերյալ

Էլեկտրոնային աճուրդն սկսվել է հայտը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ ս. թ. նոյեմբերի 7-ին ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և էլեկտրոնային հասցեները

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեներ
1	«Կոմպմարկետ» ՍՊԸ	info@comp.am
2	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	corp@patron.am
3	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	normaplusarmenia@gmail.com
4	«Կոմպասս» ՍՊԸ	compassarmeps@gmail.com
5	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	tamarapetrosyan@eldoarado.am
6	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	khv_84@mail.ru

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Նախա-հաշվային գներ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Կոմպմարկետ» ՍՊԸ	5600000	20%	6720000	5480000	20%	6576000	7500000
2	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	6248750	20%	7498500	5544000	20%	6652800	
3	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	5833300	20%	6999960	5833300	20%	6999960	
4	«Կոմպասս» ՍՊԸ	6175000	20%	7410000	6175000	20%	7410000	
5	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	7083333	20%	8499999.6	7083333	20%	8499999.6	
6	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	7500000	20%	9000000	7500000	20%	9000000	

5. Տվյալներ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

07.11.2018թ. Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը որոշեց՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտերը ներկայացված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին: «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները մերժվել են էլեկտրոնային աճուրդի ավտոմատ համակարգի կողմից՝ նախահաշվային գնի գերազանցման պատճառով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. *Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով, համակարգի միջոցով ծանուցել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. *ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ*

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

9. *Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին*

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվեց 14.11.2018թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Գ. Խաչիկյան

Քարտուղար՝ _____ Պ. Մարգարյան